ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 29-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-24/19»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Կարճ հաղորդագրությունների (sms) ուղարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի հունվարի 26-ին ժամը 18:09:20-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2024 թվականի հունվարի 29-ին ժամը 10:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-24/19 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին.
Տեղեկացնում եմ, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 22.09.2021թ. N 354-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Պետական մարմինների համար օգտագործվող ալիասներով կարճ հաղորդագրություններն Օպերատորի կողմից ուղարկվում են՝ տեղեկատվության անվտանգության ISO/IEC27001 միջազգային ստանդարտի հավաստագրի առկայության դեպքում: Ընդ որում նշված նորմը գործում է 2023թ. հուլիսի 1-ից: Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ պարզաբանել, արդյո՞ք ընթացակարգի մասնակիցների համար պարտադիր է ISO/IEC27001 միջազգային ստանդարտի հավաստագիր ունենալը, որպեսզի հնարավորություն ունենան նախատեսված ծառայությունների մատուցումը ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ մատուցելու համար:

Հարցադրում N 2: Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.2 կետի պահանջների համաձայն՝ գնային առաջարկը պետք է ներկայացվի ծառայությունների ընդհանուր քանակի համար, այնինչ տեխնիկական բնութագրում նշված է, որ մասնակիցը ներկայացնելու է մեկ հաղորդագրության արժեքը: Խնդրում եմ պարզաբանել, արդյո՞ք մեր կողմից համակարգում պետք է նշվի մեկ հաղորդագրության գինը, եթե ոչ, ապա խնդրում եմ հրավերում ներառել ընդհանուր հաղորդագրությունների քանակը, որպեսզի հնարավոր լինի ներկայացնելու գնային առաջարկ՝ ամբողջ ծավալի համար:

Պարզաբանում N 1: Հայաստանի Հանրապետությունում ցանկացած տնտեսական գործունեություն, այդ թվում նաև «Կարճ հաղորդագրությունների (sms) ուղարկման ծառայությունների» մատուցումը, կարգավորվում է ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով: Ուստի, Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար մասնակիցներն իրենց հայտերը ներկայացնելիս պետք է ղեկավարվեն ՀՀ օրենսդրության պահանջներով: Հաշվի առնելով ՀՀ օրենսդրական պահանջները՝ մրցույթի Հրավերը անհարկի չի ծանրաբեռնվել ոլորտը կարգավորող օրենսդրական պահանջներով:

Պարզաբանում N 2: Հրավերին կից ներկայացված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» ընդհանուր քանակը սյունակում նշված է ընդհանուր հաղորդագրությունների քանակը և հատուկ կարմիր տառերով պարբերությամբ ներկայացված է գնային առաջարկի ներկայացման պահանջը և հաշվարկը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-24/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով